'ի վաղնջոց յոյժ աւերեալ, որ 'ի պատճառէ յեղեղումն անկարգ վարիւք յեղելոյ 'ի նախնեաց ինքնակալ իշխանաց արարմանց մերոց խախտեալ և քայքայեալ, և արդ՝ կազմելով, սա իբր կացի մի ծանդր վասն խորտակելոյ լուծն ծառայութեան, և բնականապէս ազատ առնելոյ ամենայն բնութիւն մարդոյ և կազմել որոգայթ մի հնարագիտութեան, զի ընդ իւր քարշելով կալանաւորեսցէ ամենայն ծուլ և հոռի վատթար արանց, որում հաւատամ ես, զի գացի շարադրութիւնն իմ 'ի ունկս ընթերցողաց ձերոց ըստ համեմատութեան կամաց և հաճոյից ձերոց, և զամենայն զոր ինչ ես ունիմ 'ի միտս իմ վասն հնարելոյ 'ի վեր ասացեալ ծանդրութեանց, ահա շարեսցի 'ի յայսմ ամենայն հարկաւորութիւնք, այլ բացատրութիւն իւրաքանչիւր հատորի վասն պատճառին իւրոյ գտանելոց էք 'ի երկրորդ հատոր գրքուկս, որ կարի պարզապէս երևիլ 'ի տեսակս ձեր, և հաստատիլ 'ի միտս ամենայն ուշիմ արանց բարութիւնն բանիս և քաղցրութիւնն պրտղոյն սերմի ցանելոյս 'ի սիրտ ազգին իմոյ, զի ամենայն երկայնամիտք բարեպէս կարի ճանաչիցեն զինչ պտուղ 'ի այս ցանելոյս կթել կարեն բոլոր ազգն Հայոց, կրկնելով յիշեցուցից հարկաւորութիւն Օգնականութեան դէտապետաց մերոց, զի յոյժ հարկաւոր է սաստիկ հրամանաւ պարտաւորեսցեն ժողովրդեան իւրեանց ուսանիլ